ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/14 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

Ք.Գավառ «23» ապրիլի 2024թ.

ժամը 12:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Մ.Մովսիսյան /նախագահ/,
Ա. Բոշյան, Ն.Մուրադյան,

Քարտուղար՝ Ս.Թամամավեյան

ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/14 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման մասին

Մ.Մովսիսյան

1) «Գնումների համակարգող /քարտուղար/ Սեդա Թամամավեյանը հայտարարեց, որ Auction էլեկտրոնային համակարգով գնային առաջարկ է ներկայացրել 1 /մեկ/ մասնակից՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն, էլ հասցե
1	«ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ	Ք.Երևան,Մոլդովական 50/4, footmafor@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/14 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացրած հայտը պարզվեց.

2.1) «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- ներկայացված հայտում սխալ է նշվել՝ պատվիրատուի անվանումը, գնման ընթացակարգի ծածկագիրը, չափաբաժինների քանակը,
- հավելված 1-ում /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարություն/ բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը,
- ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող հավելված 1.2-ը /իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև/:
- Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը թերի է՝ սխալ է լրացված արտադրողի անվանումը: Բնութագիրը արտագրված է պատվիրատուի բնութագրից, այն ինչ մասնակիցը ինքը պետք է բնութագրի իր կողմից առաջարկվող ապրանքը. մասնավորապես՝ գույնը, շարժիչի հզորությունը, առավելագույն զանգվածը, գազի բալոնների քանակը, դրանց փորձարկման թղթերի առկայությունը, թափքի չափերը, տեղեկատվություն մեքենայի և մարտկոցի սարքինության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3) Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-N որոշման 41-րդ կետը և 2024 թվականի ապրիլի 10-ին ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/14 ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հրավերի փաթեթի I-ին մասի 8.11 կետի պահանջները, **գնահատող հանձնաժողովը որոշեց՝** կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով՝ «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 25/04/2024 թվականի ժամը 18:00-ն, շտկել վերը նշված բոլոր անհամապատասխանությունները և էլեկտրոնային եղանակով Գավառի համայնքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Վերը նշված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի հրավերի պահանջներին չհամապատասխանող (անբավարար) և կմերժվի՝ դիտելով որպես գնման գործընթացի խախտում՝ ներառելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4) Գնահատող **հ**անձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի ապրիլի 26-ին ժամը 11:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Մ.ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ա.ԲՈՇՅԱՆ
		Ն.ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ԹԱՄԱՄԱՎԵՅԱՆ